

տատուի նաեւ որ Հիթում Բ. Սեպտեմբերի (1295) սկիզբը ճամբայ ելած է այցելելու Պայտունի՝ Կիլիկիայէն: Նոյեմբերի սկիզբները ներկայացած Ղազանին և նոյն ամսուան մէջ Կիլիկիա իր արքունիքը վերադարձած իր հետեւորդներով:

Հոս յարակից ճշտում մըն ալ: Օրմաւնեան Ստեփանոս Օրբելեանէ առնելով կը յիշէ ոսկիէ փայլչայ մը Ղազան խանէ տրուած: Այս փայլչան այլուր գրուած է թալիշ մի ոսկի՝ որ կը տրուի Վարդան վարդապետի 1264 թուին՝ երբ ան Հուլաղուի մօտ կը գտնուէր: Այս թալիշ կամ փայլչայն ըստ Օրբելեանի տախտակ է յսփ թղթոյ միոյ և կիսոյ, զրեալ ի վերայ զանոն Աստուծոյ և զանին: Չոյլ ոսկիէ այս նշանները, կ'ըսէ Օրմանեան, «թաթարներուն համար ամէնէն մեծ պատիւն էր» (Ազգապատում էջ 1662):

Թալիշ կամ փայլչայ Հայերէն աղաւաղումն է թայզայ (Paizah կամ Paizah) որ իր կարգին աղաւաղումն է Չինարէն pai-tseuի: Կային թայիզաներ որոնք արծաթէ ձուլուած էին որոնց մեծութիւնը մօտաւորապէս 12×4 ինչեզ էր, իսկ ձուլ ոսկիէն կ'ըլլար 6×2 ինչեզ: Ասոնց վրայ կ'ըլլար Աստուծոյ և ժամանակուան թաթար գահակալին անունը: Բայզայ ըստ տալիքը կը վայլէր մեծ հեղինակութիւն և

առանձնաշնորհումներ թաթար երկրամասին մէջ: Բայզայ տրուած է Մարգո Բօլոյի, Վարդան վարդապետի, Ստեփաննոս Օրբելեանի, Մար Եհանգ Ալահա Գ. Նեստորական Կաթողիկոսին, բոլորն ալ թիզարուն: Ընդհանրապէս միայն կը տրուէր Մոնկոլ արքունեաց ընտրանիին և արքունի տան անդամներուն:

Բայզաներուն հետ կը տրուէր նաեւ Էարլիկ կամ Եարլիխ (Yarligh կամ Yarlikh) տեսակ մը թուրքիոյ Սուլթաններուն Պոռնոքոյտի, որ առաւել կամ նուազ անցազիր մըն էր, և հրաման՝ վճարմամբ ձի կամ ջորի ստանալու իջեւաններէն:

Աւելցնեմ որ ցարդ ոսկիէ թայզայ չէ գտնուած: Իսկ արծաթէ հատ մը գտնուեցաւ 1846ին և կը գտնուի Լենինկրատի Ակադեմիոյ թանգարանին մէջ: Ունի երկաթ օղակ մը թայզան առկախ կրելու համար: Վրան Պասրա գրանշաններով և Մոնկոլ լեզուով գրուած է «Շնորհիւ յաւիտենական երկնից զօրութեան: Թող սուրբ ըլլայ Գախանի (Արքայից Արքայի) անունը: Ան որ անոր յարգանք չի մատուցաներ պիտի սպանուի և պէտք է որ մեռնի»:

Բայզայի կոնակը կայ թիւ 42. ծանրութիւնը՝ շուրջ բառնոտ է:

Յ. ՔԻՐՏԵԱՆ

ՆԻԹԵՐ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՅԵՐԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԷՋ ԺԷ ԴԱՐՈՒՆ

Անմահ Հ. Ալիշանի ՀԱՅ-ՎԵՆԵՏԷՆ վերջ շատ բան մը չի մնար Վենետիկի Հայ գաղութի անցեալին վրայ աւելցընելու, բայց սակայն ինչ որ ալ ըլլայ արժանի է որ գտնուածը ներկայացուի:

The Hartford Seminary Foundation, Case Memorial Library-ի (Hartford, Conn. U. S. A) Հայերէն

ձեռագրաց ցուցակը կազմած ատենս թիւ 95/200 ձեռագրին մէջ գտայ երկարաշունչ տաղ մը «Վասն Յակոբայ Նահապետին, և Վասն ծննդեան Յովսէփայ և տեսանելոյ զերազն և պատմել հօրն և եղբարցն» որ շարադրուած է Վենետիկ, ինչպէս որ տաղին վերջի հինգ տունները ցոյց կու տան, և զորս հոս կ'արտագրեմ: